ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Շահումյանի թ/ֆ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Շահումյանի թ/ֆ
Հեռ.՝095 84 00 08
փոստ՝shahumyantf.armavir@mta.gov.am
Համայնքային կայք՝ shahumyanitf.am

N 209

<<30>> դեկտեմբերի 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան մարզպետ

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի ղեկավարի՝ 2019 թվականի դեկտեմբերի 12-ից դեկտեմբերի 30-ը ընդունած որոշումները և կարգադրությունները :

Առդիր՝ 3 թերթ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

<<30>> դեկտեմբերի 2019թ.
Շահումյանի թ/ֆ համայնք

Կատ.՝ Հ. Մանուկյան
Հեռ.՝ 093 53 84 56

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Շահումյանի թ/ֆ համայնք
Հեռ.՝044 84 08 08, Էլ. փոստ՝shahumyantf.armavir@mta.gov.am
Համայնքային կայք՝ shahumyanitf.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 դեկտեմբերի 2019 թվականի N 61

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի ավագանու՝ 2006 թվականի օգոստոսի 10-ի N 9 նիստի որոշումը և անշարժ գույքի սեփականատեր Զարզանդ Բարսեղյանի ՝ 2019 թվականի դեկտեմբերի 5-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքում գտնվող Զարզանդ Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Շահումյանի թ/ֆ համայնք, 4-րդ փողոց, 1 / 4 տուն:
2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Շահումյանի թ/ֆ համայնք
Հեռ.՝ 044 84 08 08, Էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am
Համայնքային կայք՝ shahumyanitf.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 դեկտեմբերի 2019 թվականի N 62

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ
ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> N 912-Ն որոշումով, 2003 թվականի ապրիլի 17-ի <<Բազմաբնակարան բնակելի շենքերի, բնակարանների, անհատական բնակելի տների, այգետնակների /ամառանոցների/ և դրանց կից շինությունների, առանձին կանգնած հասարակական ու արտադրական նշանակության շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հասարակական և արտադրական նշանակության շինությունների տեղադրության /տարածագնահատման գոտիականության/ գործակիցները հաստատելու մասին>> N 470-Ն որոշումով, քննության առնելով Զարգանդ Բարսեղյանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 5-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի 4-րդ փողոց, 1/4 հասցեում Զարգանդ Բարսեղյանի կողմից ինքնակամ կառուցված 9 քմ շինությունը ճանաչել օրինական՝ որպես ինքնակամ կառուցված շինության օրինականացման համար համայնքային բյուջե վճարելով 9 քմ x 860 դրամ = 7740 / յոթ հազար յոթ հարյուր քառասուն / ՀՀ դրամ :
2. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՅԱՅԼՈՅԱՆ

«12» դեկտեմբերի 2019թ.
Շահումյանի թ/ֆ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Շահումյանի թ/ֆ համայնք
Հեռ.՝ 095 84 00 08
փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am
shahumyanitf.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<27>> դեկտեմբերի 2019 թվական N 34

ՀԱՅԿ ՀՐԱՉԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Այգեպան Հայկ Մկրտչյանին 2020 թվականի հունվարի 1-ից ազատել աշխատանքից՝ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ:
2. Շահումյանի թ/ֆ համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետին՝ Հայկ Մկրտչյանի հետ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ :
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

<<27>> դեկտեմբերի 2019 թվական
Շահումյանի թ/ֆ համայնք